ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1200-Ա « 04 » մարտի 2026 թ.

ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ ՍՈՖԻԱՅԻ ՓՈՂՈՑ Հ.88/2 ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԱՅԻԿ ԱԼԲԵՐՏԻ ՄԻՐԶՈՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Արայիկ Ալբերտի Միրզոյանի (ծնված 19.10.1971թ.) դիմումը (09.06.2022թ.Դ-32637-22) :

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, ՀՀ կադաստրի կոմիտեի 26.05.2025թ. հ.ԱՏ-26052025-01-1201 տեղեկանքը, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 20.02.2026թ. հ.Հ-1066 գրությունը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 17.02.2026թ. հ.20-Ել-Դ-2281 եզրակացությունը, համաձայն որի ք.Երևան, Էրեբունի Սոֆիայի փողոց հ.88/2 հասցեում բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1, 2, 3 կետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին հոդվածով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ.

1.Վերականգնել ք.Երևան, Էրեբունի Սոֆիայի փողոց հ.88/2 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Արայիկ Ալբերտի Միրզոյանի սեփականության իրավունքը բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ 125.91քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 125.91քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

2.Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետի կողմից հաստատված հատակագծով:

3.Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի N 204-Ն որոշմամբ հաստատված՝ Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը՝ ք.Երևան, Էրեբունի Սոֆիայի փողոց հ.88/2 հասցեում գտնվող 125.91քմ հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման:

4. Երևան, Էրեբունի Սոֆիայի փողոց հ.88 բնակելի տանը տրամադրել «Էրեբունի, Սոֆիայի փողոց հ.88/2» հասցեն:

5.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

6.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշի-նության վարչության պետի վրա:

7.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ